1. Իրավական ակտի սահմանափակումները որոշելիս սահմանափակումները համարում է ինչպես այն ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:
2. Սահմանափակումները որոշումները և եզրակացությունները ընդունում է միայն Ռիմումում նշված առարկայի վերաբերյալ:
3. Սահմանափակումների որոշման և եզրակացության հիմքում չեն կարող ընդգրկվել գործի ընթացքի ընթացքում չհետազոտված հանգամանքներ:
4. Սահմանափակումների որոշումները և եզրակացությունները հրապարակվում են նիստում և կցվում գործին:

Հոդված 64.

Որոշման կամ եզրակացության շարափրանքը

1. Սահմանափակումների որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները.
 - 1) որոշման կամ եզրակացության անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
 - 2) կողմերի և դատավարության այլ մասնակիցների մասին անհրաժեշտ տվյալները.
 - 3) քննվող հարցը, առիթները և հիմքերը.
 - 4) Սահմանափակումների այն հոդվածը, որի համաձայն՝ դատարանն իրավասու է քննելու տվյալ գործը.
 - 5) Ռիմումի համառոտ բովանդակությունը.
 - 6) փաստական և իրավական հանգամանքներ, որոնք հետազոտվել են դատարանի կողմից.
 - 7) Սահմանափակումների և սույն օրենքի այն հոդվածները, որոնցով ղեկավարվել է դատարանը որոշում կամ եզրակացություն ընդունելիս.
 - 8) դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող փաստարկները, այն թվում՝ նաև այն փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները.
 - 9) որոշման կամ եզրակացության ձևակերպումը՝ սույն օրենքով նախատեսված ղեկավարում նշելով նաև անվավեր հանաչված իրավական ակտի կամ ընդհանուր դրույթների հետ փոխկապակցված այլ դրույթների անվավերության մասին.
 - 10) որոշման կամ եզրակացության վերջնական լինելու մասին նշումը.
 - 11) որոշման հրապարակման պահից ուժի մեջ մտնելու մասին կամ սահմանափակումները դատարանի կողմից Սահմանափակումների չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ ընդհանուր

մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին նշումը:

2. Սահմանադրական Ղատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումը կամ եզրակացությունն ստորագրում է նիստը նախագահողը:

Հոդված 65.

Որոշման կամ եզրակացության առաքումը և հրատարակումը

1. Սահմանադրական Ղատարանի որոշումներն ու եզրակացությունները Ղրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են՝

1) Ղատավարության կողմերին.

2) Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն, վեոաբեկ Ղատարան, մարդու իրավունքների պաշտպանին և գլխավոր Ղատախազին:

2. Սահմանադրական Ղատարանի որոշումներն ու եզրակացությունները հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սահմանադրական Ղատարանի տեղեկագրում:

Հոդված 66.

Որոշումը չկատարելու հետևանքները

Սահմանադրական Ղատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 67.

Որոշումների կատարման վիճակի ամփոփումը

Սահմանադրական Ղատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վեոաբեոյալ: Այն ուղարկվում է պետական և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 68.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերի քննությունը Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերում նշված մարմինների և անձանց Ղիմուհեների հիման վրա (իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն)

1. Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով կարող է վիճարկվել այդ կետում նշված ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը, բացառությամբ մարդու իրավունքների պաշտպանի կողմից Ղիմում ներկայացնելու Ղեպքերի:

Մարդու իրավունքների պաշտպանը կարող է վիճարկել միայն նորմատիվ ակտերի սահմանադրականությունը:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման վերաբերյալ Ազգային ժողովի որոշումների սահմանադրականությունը կարող է վիճարկվել միայն տվյալ որոշման ընդունման համար Սահմանադրությամբ նախատեսված պահանջների պահպանման տեսանկյունից:

3. Հանրապետության Նախագահը, Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ գործերով սահմանադրական Ղատարան Ղիմելուց առաջ կասեցնում է տվյալ որոշման գործողությունը՝ մեկ ամիս ժամկետով: Տվյալ գործով Հանրապետության Նախագահը սահմանադրական Ղատարան կարող է Ղիմել կասեցման վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրը:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով որպես պատասխանող կողմ Ղատավարությանը ներգրավվում է վիճարկվող ակտն ընդունած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը:

Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների ղրույթների վիճարկման վերաբերյալ գործերով որպես պատասխանող կողմ ներգրավվում է Ազգային ժողովը, իսկ որպես հարակից պատասխանող՝ սահմանադրական Ղատարանի որոշմամբ կարող է ներգրավվել կառավարությունը, եթե նա է ներկայացրել տվյալ օրենքը հանրաքվեի Ղնելու առաջարկը:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով սահմանադրական Ղատարանը որոշում է ընդունում Ղիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Սահմանադրական Ղատարանի պատճառաբանված որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

Սույն հոդվածի 3-րդ մասում նշված գործերով սահմանադրական Ղատարանը որոշում է ընդունում ոչ ուշ, քան Ղիմումը մուտքագրելուց մեկ ամիս հետո:

6. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը սահմանադրական Ղատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն Ղեպքերի, երբ տվյալ գործը սահմանադրական Ղատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ Ղրա բանավոր Ղատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը:

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով որոշում ընդունելիս սահմանադրական Ղատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին Ղրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ Ղնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, Ղրանց սահմանափակումների թուլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և Ղրանց պաշտոնատար անձանց լրագրությունների թուլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով սահմանադրական Ղատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող հանաչելու մասին.

2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր հանաչելու մասին:

9. Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական Ղատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող Ղրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ Ղրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող Ղրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ Ղրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական Ղատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր հանաչել նաև այդ Ղրույթները:

10. Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր

ճանաչելու մասին որոշում ընդունվելու Ղեկավարում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական Ղատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով սահմանված Ղեկաբերի:

Այդ ակտերի վրա հիմնված սահմանադրական Ղատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և կատարված վարչական կամ Ղատական ակտերը վերանայման ենթակա չեն:

Զկատարված վարչական և Ղատական ակտերի կատարումը սահմանադրական Ղատարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ Ղադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ Ղատարանի որոշմամբ:

11. Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան Ղրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

12. Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը սահմանադրական Ղատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական Ղատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ Ղատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ Ղատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

13. Քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող Ղրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու Ղեկավարում այդ Ղրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից:

Այդ Ղրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական Ղատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված Ղատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

14. Սահմանադրական Ղատարանը սույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ գործով ընդունված ըստ էության որոշումից առնվազն 7 տարի հետո, սույն օրենքով սահմանված կարգով, ներկայացված համապատասխան Ղիմումի հիման վրա կարող է վերանայել իր հիշյալ որոշումը, եթե՝

- 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված Ղրույթը.
- 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության Ղրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական Ղատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրատիրական նշանակություն:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված Ղիմումը չի կարող վերաբերել այն իրավական ակտերին (ընդանց առանձին Ղրույթներին), որոնք սահմանադրական ղատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված Ղիմումների հիման վրա գործը քննության ընդունելու վերաբերյալ սահմանադրական ղատարանի որոշումն ընդունվում է սահմանադրական ղատարանի անդամների 7 ձայնով:

Սույն մասում նշված գործերի քննությունը չի կարող մեթոդով սույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, եթե առկա են սահմանադրական ղատարանի որոշումը վերանայելու՝ սույն մասի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված հիմքերը:

15. Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական ղատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ Ղրա որևէ Ղրույթի՝ սահմանադրական ղատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական ղատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ ղեպքում մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելը ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող:

16. Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումները:

17. Հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի Ղրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության և պետության համար, և ավելի էական փաստացի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին:

Հոդված 69.

Կոնկրետ գործերով վերջնական ղատական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց Ղիմումների հիման վրա (անհատական Ղիմումների քննություն)

1. Սույն հոդվածում նշված գործերով Ղիմում (այսուհետ՝ անհատական Ղիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված ղատարաններում ղատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական ղատական ակտով կիրառվել է որևէ օրենքի Ղրույթ, որը սպառել է ղատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ

տվյալ գործով կիրառված օրենքի ղրույթը հակասում է Սահմանադրությանը:

2. Անհատական Ղիմուհները կարող են ներկայացվել ինչպես Ազգային ժողովի ընդունած, այնպես էլ հանրաքվեով ընդունված օրենքների ղրույթների սահմանադրականության վերաբերյալ:

3. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ Ղատավարությանը ներգրավվում է Ազգային ժողովը՝ իր ընդունած օրենքների առնչությամբ:

Հանրաքվեով ընդունված օրենքների ղրույթների վիճարկման վերաբերյալ գործերով որպես պատասխանող կողմ նույնպես ներգրավվում է Ազգային ժողովը, իսկ որպես հարակից պատասխանող՝ սահմանադրական Ղատարանի որոշմամբ կարող է ներգրավվել կառավարությունը, եթե նա է ներկայացրել տվյալ օրենքը հանրաքվեի ղնելու առաջարկը:

4. Անհատական Ղիմուհը պետք է հղումներ պարունակի օրենքի այն ղրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և Սահմանադրության այն ղրույթներին, որոնց, Ղիմողի գնահատմամբ, հակասում են տվյալ օրենքի ղրույթները, ինչպես նաև պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ:

5. Սույն հոդվածում նշված գործերով Ղիմուհները կարող են սահմանադրական Ղատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված Ղատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

6. Անհատական Ղիմուհներով գործը քննության ընդունելու կամ Ղիմուհի քննությունը մերժելու վերաբերյալ որոշումը, բացառությամբ սույն օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված Ղեպքերի, կայացվում է սահմանադրական Ղատարանի երեք անդամի կազմով, որը որոշում է ընդունում սահմանադրական Ղատարանի անունից: Դատական կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ, որի անցկացման կարգը սահմանվում է սահմանադրական Ղատարանի կանոնակարգով:

7. Անհատական Ղիմուհների քննությունը, ի լրումն սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված Ղեպքերի, կարող է մերժվել նաև այն Ղեպքերում, երբ անհատական Ղիմուհն ակնհայտ անհիմն է, կամ Ղիմողը չի սպառել Ղատական պաշտպանության բոլոր միջոցները:

8. Անհատական Ղիմուհների քննությունը մերժելու մասին սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը պետք է լինի պատճառաբանված: Այն պետք է ընդունվի միաձայն, հակառակ Ղեպքում Ղիմուհը քննության ընդունելու հարցը սահմանադրական Ղատարանը վերստին քննում և լուծում է ամբողջ կազմով, իսկ այն հարցով որոշումն ընդունվում է անհատական Ղիմուհը մուտքագրելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամիս հետո:

9. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարանը որոշում է ընդունում սույն օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված ժամկետներում:

10. Անհատական Ղիմուհների ընդունման և նախնական ուսումնասիրման կարգը սահմանվում է սահմանադրական Ղատարանի կանոնակարգով, իսկ Ղրանց հիման վրա գործերը քննության ընդունելու կամ գործերի քննությունը մերժելու հատուկ կանոնները սահմանվում են սույն

օրենքով:

11. Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այլ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերի կանոնները:

12. Սույն հոդվածում նշված գործերով օրենքի՝ Ղիմողի կողմից վիճարկվող Ղրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր հանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու Ղեպքում Ղիմողի նկատմամբ կիրառված վերջնական Ղատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

Հոդված 70.

Նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը տեղական ինքնակառավարման մարմինների Ղիմումների հիման վրա

1. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարան կարող են Ղիմել տեղական ինքնակառավարման այն մարմինները, որոնց՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքները խախտվում են Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական Ղատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտով, որն ունի նորմատիվ բնույթ, կամ Ղրա որևէ Ղրույթով:

2. Սույն հոդվածում նշված գործերով Ղիմումները սահմանադրական Ղատարան կարող են ներկայացվել այն պահից սկսած, երբ տեղական ինքնակառավարման մարմինն իմացել է կամ պարտավոր է Ղ իմանալ իր իրավունքների խախտման կամ Ղրանց խախտման իրական հնարավորության մասին, բայց ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

3. Սույն հոդվածում նշված գործերով տեղական ինքնակառավարման մարմինների Ղիմումները պետք է համապատասխանեն Ղիմումին ներկայացվող՝ սույն օրենքով նախատեսված ընդհանուր, ինչպես նաև սույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին:

4. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ ներգրավվում է վիճարկվող նորմատիվ ակտն ընդունած պետական մարմինը, իսկ օրենքների վիճարկման Ղեպքում պատասխանող կողմի ներգրավման հարցը պետք է լուծվի սույն օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոններին համապատասխան:

5. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարանը որոշում է ընդունում սույն օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված ժամկետներում:

6. Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այլ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերով նախատեսված կանոնները:

Հոդված 71.

Նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը Ղատարաններին և գլխավոր Ղատախազի Ղեմուսների հիման վրա (իրավական նորմերի կոնկրետ վերահսկողություն)

1. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարան Ղեմում են Ղատարանները, ինչպես նաև գլխավոր Ղատախազը, եթե գտնում են, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական Ղատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, Ղրույթը կամ Ղրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը:
2. Դատարանները սահմանադրական Ղատարան Ղեմելուց առաջ պարտավոր են, իսկ գլխավոր Ղատախազը կարող է կասեցնել կոնկրետ գործի վարույթը մինչև սահմանադրական Ղատարանի ընդունած որոշումն ուժի մեջ մտնելը:
3. Դատարանները կարող են Ղեմել սահմանադրական Ղատարան համապատասխան գործով վարույթը սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը, իսկ գլխավոր Ղատախազը՝ տվյալ գործն իր վարույթ ընդունելուց հետո՝ մինչև այն օրենքով սահմանված կարգով իրավասու Ղատարան ուղարկելը:
4. Դատարանները և գլխավոր Ղատախազը վարույթը կասեցնելու Ղեպքում սույն հոդվածով նախատեսված Ղեմուսները կարող են ներկայացնել իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Սահմանադրական Ղատարան Ղեմելը ձևակերպվում է համապատասխան Ղատարանի կամ գլխավոր Ղատախազի որոշմամբ:
5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված Ղեմուսներում Ղատարանը և գլխավոր Ղատախազը պետք է հիմնավորեն իրենց Ղիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող Ղրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առկայությամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող Ղրույթի կիրառմամբ:
6. Դիմումին կցվում է Ղեմողի վարույթում գտնվող գործը, որը Ղեմողին է վերաՂարձվում սահմանադրական Ղատարանի որոշումն ընդունելուց հետո:
7. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ ներգրավվում է վիճարկվող նորմատիվ ակտն ընդունած պետական մարմինը, իսկ օրենքների վիճարկման Ղեպքում պատասխանող կողմի ներգրավման հարցը պետք է լուծվի սույն օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոններին համապատասխան:
8. Սույն հոդվածում նշված գործերով Ղատաքննությունն իրականացվում է միայն գրավոր ընթացակարգով: Կողմերը մինչև գործի Ղատաքննությունն սկսվելը սահմանադրական Ղատարան են ներկայացնում իրենց Ղիրքորոշումն արտահայտող գրավոր բացատրություններ:

9. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարանը որոշում է ընդունում սույն օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված ժամկետներում:

10. Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այլ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 7-17-րդ մասերով նախատեսված կանոնները:

Հոդված 72.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը)

1. Մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը ընդունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով սահմանադրական դատարան է դիմում Հանրապետության Նախագահը:

2. Սույն հոդվածում նշված գործերով, իր ծանրաբեռնվածությունից ելնելով, սահմանադրական դատարանը կարող է որոշում կայացնել հիշյալ գործերը միջանց հաջորդող դատական նիստերում քննելու մասին՝ այլ գործերից յուրաքանչյուրի քննության ավարտից հետո հետաձգելով ընդունված ըստ էության որոշման ընդունումը՝ մինչև բոլոր հիշյալ գործերի քննության ավարտը:

Այլ գործերից յուրաքանչյուրով ըստ էության որոշումն ընդունվում է մեկնույն ընդհանուր խորհրդակցության արդյունքում, և բոլոր որոշումները դատական նիստում հրապարակվում են հաջորդաբար՝ ըստ քննված գործերի հաջորդականության:

3. Սույն հոդվածում նշված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանի պատճառաբանված որոշմամբ գործի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

4. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

5. Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- 1) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապատասխանող հանաչելու մասին.
- 2) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը չհամապատասխանող հանաչելու մասին:

Հոդված 73.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծումը)

1. Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված գործերով որպես պատասխանող կողմ ներգրավվում է հանրաքվեների արդյունքներն ամփոփող պետական մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով սահմանադրական ղատարանն իրավասու է իր որոշումն ընդունելու համար անհրաժեշտ ապացույցների (փաստերի վերաբերյալ տեղեկությունների) ձեռքբերումը հանձնարարելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում՝ ղատարաններին և ղատարագույցի մարմիններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև իր աշխատակազմի աշխատողներին: Այդ կապակցությամբ սահմանադրական ղատարանն իրավասու է ձևավորելու հանձնարարք՝ ներգրավելով սահմանադրական ղատարանի անդամներից մեկին (որպես հանձնարարի կամ հանձնարարի ղեկավար) և տարբեր կամ միևնույն մարմինների աշխատակիցների, ինչպես նաև իրենց համաձայնությամբ՝ Ազգային ժողովի պատգամավորներին, տեղական և միջազգային Ղիտորդներին:

Ներկայացված ապացույցները ենթակա են հետազոտման սահմանադրական ղատարանի կողմից՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական ղատարան կարելի է Ղիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերի ղատարաններն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով սահմանադրական ղատարանի որոշումը պետք է ընդունվի Ղիմումը մուտքագրելու պահից 50 օրվա ընթացքում:

6. Սահմանադրական ղատարանի որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան մեկ ամսով:

7. Հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական ղատարանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը թողնել ուժի մեջ.

2) անվավեր հանաչել հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը, և հանրաքվեի Ղրված նախագիծը համարել ընդունված կամ չընդունված կամ անվավեր հանաչել հանրաքվեի արդյունքները:

Հոդված 74.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը)

1. Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման մասին Ղիմումներով սահմանադրական Ղատարան կարող են Ղիմել Հանրապետության Նախագահի թեկնածուները:

2. Պատգամավորների ընտրությունների (համամասնական և մեծամասնական ընտրակարգով) արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման մասին Ղիմումներով սահմանադրական Ղատարան կարող են Ղիմել պատգամավորության թեկնածուները՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով, ինչպես նաև կուսակցությունները կամ կուսակցությունների Ղաշինքները՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով:

3. Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական Ղատարան կարելի է Ղիմել արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ յոթերորդ օրը:

4. Որպես պատասխանող կողմ Ղատավարությանը ներգրավվում է ընտրությունների արդյունքներն ամփոփող պետական մարմինը:

Անհրաժեշտության Ղեպքում կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, որպես հարակից պատասխանող (պատասխանողներ), սահմանադրական Ղատարանը կարող է ներգրավել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց որոշումները կամ գործողությունները կարող էին ներգրծել ընտրությունների արդյունքների վրա, կամ որոնք պարտավոր էին (պարտավոր են) օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները, բացառությամբ Ղատարանների:

5. Այն թեկնածուները կամ կուսակցությունները (կուսակցությունների Ղաշինքները), որոնց իրավունքները շոշափվում են կամ կարող են շոշափվել գործի քննության ընթացքում կամ Ղրա արդյունքում ընդունվելիք որոշմամբ, կարող են սահմանադրական Ղատարանի որոշմամբ որպես երրորդ անձինք ներգրավվել Ղատավարության մեջ՝ իրենց Ղիմումի հիման վրա, իսկ այն Ղեպքերում, երբ սահմանադրական Ղատարանի որոշումը պարտադիր կերպով տարածվելու է նաև երրորդ անձանց վրա, ապա սահմանադրական Ղատարանն ինքն է պարտավոր այն անձանց ներգրավել Ղատավարության մեջ:

6. Երրորդ անձինք Ղատավարության մեջ կարող են ներգրավվել գործի քննության ցանկացած փուլում:

7. Երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք իրենց էությունը տարածելի չեն երրորդ անձանց վրա:

8. Սահմանադրական Ղատարանում քննվող գործով որոշում ընդունելու համար անհրաժեշտ

ապացույցների (փաստերի վերաբերյալ տեղեկությունների) ձեռքբերման առնչությամբ կիրառվում են սույն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները:

9. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված գործերի Ղատաքնությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

Մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման վերաբերյալ գործերի Ղատաքնությունը սահմանադրական Ղատառանը, իր ծանրաբեռնվածությունից ելնելով, կարող է իրականացնել գրավոր ընթացակարգով:

10. Փաստերի վերաբերյալ Ղիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, եթե պատասխանող կողմը խուսափում է Ղրանց վերաբերյալ իր ՂիՂքորոշումն արտահայտելուց, և եթե Ղրանք չեն հակասում սահմանադրական Ղատառանի կողմից ձեռք բերված, սվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցների:

11. Եթե պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով Ղիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա վերջինս ազատվում է այն հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից:

12. Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման վերաբերյալ գործերով քնությունը կարող է կասեցվել միայն այն Ղեպքերում, երբ կասեցումը չի խոչընդոտի սվյալ գործի քնությունը Սահմանադրությամբ և սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված ժամկետում ավարտելուն:

13. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատառանը պարզում է իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքների քննարկումը (քնությունը) անհիմն մերժելու, նման բողոքները սահմանված ժամկետներում չքննարկելու (չքննելու) և քննարկումից (քնությունից) հրաժարվելու կամ խուսափելու հանգամանքները, և իրավասու է նման Ղեպքերում բողոքներում արծարծվող փաստերը գնահատելու որպես հավաստի և անվիճելի, եթե այնպիսի գնահատումը չի հակասում գործի քնության ընթացքում ձեռք բերված այլ ապացույցների:

14. Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական Ղատառանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) ընտրական հանձնաժողովի որոշումը թողնել ուժի մեջ.

2) անվավեր հանաչել ընտրական հանձնաժողովի որոշումը և՝

ա) անվավեր հանաչել ընտրությունների արդյունքները,

բ) ընտրված հանաչել համապատասխան թեկնածուին կամ կուսակցության (Ղաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուների,

գ) ընտրությունները հանաչել չկայացած,

Ռ) նշանակել ընտրության երկրորդ փուլ:

15. Եթե գործի քննության արդյունքում սահմանադրական ղատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրության իրական արդյունքները, սակայն սահմանադրական ղատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է Ուրձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և Որանց համարումը վկայում է Որանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս սահմանադրական ղատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր հանաչելու ընտրությունների արդյունքները:

16. Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական ղատարանը պետք է որոշում ընդունի Ղիմուփի մուտքագրման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

17. Պատգամավորների՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական ղատարանը պետք է որոշում ընդունի Ղիմուփի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո:

18. Պատգամավորների՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական ղատարանը պետք է որոշում ընդունի Ղիմուփի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո:

19. Սույն հոդվածի 18-րդ մասում նշված գործերով, սահմանադրական ղատարանի ծանրաբեռնվածությունից ելնելով, սահմանադրական ղատարանի որոշմամբ գործերի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 50 օրով:

Հոդված 75.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած հանաչելու վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սահմանադրության 100-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ իրենց առնչվող հարցերով սահմանադրական ղատարան կարող են Ղիմել Հանրապետության Նախագահի թեկնածուները:

2. Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի հանաչելու հարցով սահմանադրական ղատարան կարելի է Ղիմել ոչ ուշ, քան Հանրապետության Նախագահի ընտրության օրվանից ութ օր առաջ:

3. Սույն հոդվածում նշված գործերի ղատարանությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

4. Սահմանադրական ղատարանը գործն ընդունում է քննության, գործը քննում և գործով որոշում է ընդունում Ղիմումն ստանալուց հետո՝ չորսօրյա ժամկետում:

5. Սահմանադրական ղատարանը կարող է անհաղթահարելի ճանաչել այն խոչընդոտները, որոնք արդեն իսկ առաջացել են և սվյալ թեկնածուից անկախ պատճառներով անհնարին են Ղարձնում նրա հետագա մասնակցությունն ընտրական գործընթացներին:

Հոդված 76.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սույն հոդվածում նշված գործերով Ազգային ժողովը Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ընդունած իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության Նախագահի այն որոշումը, գործողությունը կամ անգործությունը, որի ընդունումը կամ իրականացումն իր մեջ պարունակում է պետական Ղավաճանության կամ Քրեական օրենսգրքով նախատեսված այլ ծանր հանցագործության հատկանիշներ:

2. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է Ղիմող կողմը:

3. Սույն հոդվածում նշված գործերով ղատավարությանը որպես ղատավարության մասնակից պետք է ներգրավվի Հանրապետության Նախագահը, որն օգտվում է ղատավարության կողմի՝ սույն օրենքով սահմանված իրավունքներից և կրում է նրա պարտականությունները այնքանով, որքանով ղա չի կարող վնաս պատճառել իր իրավունքներին և ազատություններին:

4. Հանրապետության Նախագահի չներկայանալն արգելք չէ գործի ղատաքննության համար:

5. Սույն հոդվածում նշված գործերի վարույթը չի կարող կարճվել Հանրապետության Նախագահի հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների ղաղարման ղեպքերում:

6. Սույն հոդվածում նշված գործերի ղատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

7. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանի եզրակացությունը պետք է ընդունվի ոչ ուշ, քան Ղիմումի մուտքագրման օրվանից երեք ամիս հետո:

8. Գործը քննության ընդունելուց հետո մինչև գործի ղատաքննությունն սկսվելը Ղիմումը չի կարող հետ վերցվել:

9. Գործը ղատաքննության նախապատրաստելիս սահմանադրական ղատարանը կարող է ձևավորել նախաքննության մարմնի՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված հատուկ հանձնախումբ, որում ընդգրկում է վեոաբեկ ղատարանի պալատներից մեկի նախագահին (որպես հանձնախմբի ղեկավար) և վեոաբեկ ղատարանի երկու ղատավորներին: Ներկայացված ապացույցները ենթակա են հետազոտման սահմանադրական ղատարանի կողմից՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

10. Հատուկ հանձնախմբի ձևավորումը պարտադիր է, եթե Ղիմող կողմը կամ Հանրապետության Նախագահը միջնորդել է Ղրա ձևավորման վերաբերյալ:

11. Սույն հոդվածում նշված գործերի քննության ընթացքում սահմանադրական Ղատառանը կամ հատուկ հանձնախումբը մասնավորապես իրավասու է՝

1) Ղատական, Ղատախազական, քննչական մարմիններից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու նյութեր, քրեական, քաղաքացիական, վարչական գործեր, Ղատավճիռներ, վճիռներ, որոշումներ, փորձագիտական եզրակացություններ, տեղեկանքներ և այլ նյութեր:

2) հրավիրելու և լսելու այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

12. Դատական նիստը բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը (ներկայացուցիչները) ներկայացնում է (են) Ղիմող կողմի Ղիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր Ղիրքորոշումն է հայտնում Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես է գալիս Ղիմող կողմը, որը կարող է պնդել իր Ղիմումը կամ հրաժարվել Ղրանից, և Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը, որին (որոնց) տրամադրվում է պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն: Այնուհետև սահմանադրական Ղատառանը լսում է տվյալ գործով ձևավորված հանձնախմբի Ղիրքորոշումը գործի վերաբերյալ: Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչն ունեն վերջին ելույթի իրավունք: Վերջին ելույթից հետո սահմանադրական Ղատառանը կարող է սույն օրենքով նախատեսված կարգով որոշում կայացնել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այՂպիսի որոշում չկայացվելու Ղեպքում նիստը նախագահողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին:

13. Եթե գործի Ղատաքննության ժամանակ Ղիմող կողմը հրաժարվում է Ղիմումից, և Հանրապետության Նախագահը եռօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման:

Դիմումից հրաժարվելը կատարվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

14. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատառանը կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին.

2) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

15. Եզրակացություն ընդունելիս սահմանադրական Ղատառանն իրավասու է նաև գնահատելու Քրեական օրենսգրքի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված հանցագործության հատկանիշներն ամրագրող Ղրույթների սահմանադրականությունը: Հանգելով այՂ Ղրույթների՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը՝ սահմանադրական Ղատառանն ընդունում է սույն հոդվածի 14-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը:

16. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունում սահմանադրական ղատարանը պետք է նշի՝

1) Հանրապետության Նախագահի այն որոշումները, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության հզորիտ որակավորումը.

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում Հանրապետության Նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և ղատարանի պատճառաբանված Ռիթորոշումը Որանց հետազոտման վերաբերյալ:

17. Եզրակացությունն ընդունվելուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը, ուղարկվում է Ազգային ժողով և հայտարարվում հանրային հեռուստատեսությամբ:

Հոդված 77.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սույն հոդվածում նշված գործերով Ուիմում է կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին տեղեկություններին իրազեկ ղառնալուց ոչ ուշ, քան 5 օր հետո:

2. Սույն հոդվածում նշված գործերի ղատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

3. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանը Հանրապետության Նախագահին հնարավորություն է ընձեռում ավտահայտելու իր Ռիթորոշումը տվյալ գործի վերաբերյալ, եթե ղա հնարավոր է:

4. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է Ուիմող կողմը:

5. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանն իրավասու է՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև բժշկական հաստատություններից պահանջելու նյութեր, որոշումներ, փորձագիտական եզրակացություններ, տեղեկանքներ և այլ նյութեր.

2) կանչելու և լսելու այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով եզրակացություն ընդունելու համար:

6. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանի եզրակացությունը պետք է ընդունվի ոչ ուշ, քան Ուիմումի մուտքագրման օրվանից հինգ օր հետո:

7. Եզրակացությունն ընդունվելուց ոչ ուշ, քան հաջորդ օրն ուղարկվում է Ազգային ժողով,

կառավարություն և հայտարարվում է հանրային հեռուստատեսություն:

Հոդված 78.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները Պառնաբեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սույն հոդվածում նշված գործերով դատարանի այն անդամը, որի լիազորությունները Պառնաբեցման, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին եզրակացություն է տրվելու, դատավարությանը պետք է ներգրավվի որպես դատավարության մասնակից, որն օգտվում է դատավարության կողմի՝ սույն օրենքով սահմանված իրավունքներից և կրում է նրա պարտականությունները այնքանով, որքանով դա չի կարող միաս պատճառել իր իրավունքներին և ազատություններին:
2. Սույն հոդվածում նշված գործերի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:
3. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է Ղիմող կողմը:
4. Մինչև գործի դատաքննությունն սկսվելը Ղիմումը կարող է հետ վերցվել Ղիմողի կողմից, եթե սահմանադրական դատարանի անդամը տասնօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ:
5. Եթե գործի դատաքննության ժամանակ Ղիմող կողմը հրաժարվում է Ղիմումից, և սահմանադրական դատարանի անդամը եռօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ, ապա գործի քննությունը ենթակա է կարճման:
6. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարանն իրականացնում է սույն օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված իրավազորությունները:
7. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարանի եզրակացությունը պետք է ընդունվի ոչ ուշ, քան Ղիմումի մուտքագրման օրվանից 30 օր հետո:
8. Սահմանադրական դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 50 օրով:
9. Սույն հոդվածում նշված գործերով եզրակացություն ընդունելիս սահմանադրական դատարանը գնահատում է նաև սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները Պառնաբեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ամրագրող օրենքների և Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այլ իրավական ակտերի Ղրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը և հանգելով Ղրանց՝ Սահմանադրությանը

հակասելու համոզմանը՝ եզրակացություն է ընդունում համապատասխան հիմքերի բացակայության մասին:

Հոդված 79.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված գործերի քննությունը (համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սույն հոդվածում նշված գործերով որպես ղատավարության մասնակից պետք է ներգրավվի այն համայնքի ղեկավարը, որին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն է տրվելու: Նա օգտվում է ղատավարության կողմի՝ սույն օրենքով սահմանված իրավունքներից և կրում է նրա պարտականությունները այնքանով, որքանով դա չի կարող վնաս պատճառել իր իրավունքներին և ազատություններին:
2. Սույն հոդվածում նշված գործերի ղատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:
3. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է Ղիմող կողմը:
4. Մինչև գործի ղատաքննությունն սկսվելը Ղիմումը կարող է հետ վերցվել Ղիմողի կողմից, եթե համայնքի ղեկավարը տասնօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ:
5. Եթե գործի ղատաքննության ժամանակ Ղիմող կողմը հրաժարվում է Ղիմումից, և համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ, ապա գործի քննությունը ենթակա է կարճման:
6. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանն իրականացնում է սույն օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված իրավազորությունները:
7. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական ղատարանի եզրակացությունը պետք է ընդունվի ոչ ուշ, քան Ղիմումի մուտքագրման օրվանից 30 օր հետո:
8. Սահմանադրական ղատարանի պատճառաբանված որոշմամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 30 օրով:
9. Սույն հոդվածում նշված գործերով եզրակացություն ընդունելիս սահմանադրական ղատարանը գնահատում է նաև համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերն ամրագրող օրենքի Ղրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը և հանգելով Ղրանց՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը՝ եզրակացություն է ընդունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին:

Հոդված 80.

Սահմանադրության 100-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված գործերի քննությունը

(կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման վերաբերյալ գործերի քննությունը)

1. Սահմանադրական Ղատարանը կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշում կարող է ընդունել նրա գործունեության մեջ Սահմանադրության կամ կուսակցությունների մասին համապատասխան օրենքի պահանջների խախտման հատկանիշները բացահայտելու ընդհանուր:

2. Այն կուսակցությունը, որի գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ Ղիմում է ներկայացվել, սահմանադրական Ղատարավարությունում ներգրավվում է որպես Ղատարավարության մասնակից, որն օգտվում է Ղատարավարության կողմի՝ սույն օրենքով սահմանված իրավունքներից և կրում է նրա պարտականությունները:

3. Սույն հոդվածում նշված գործերի Ղատարաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

4. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է Ղիմող կողմը:

5. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարանն իրականացնում է սույն օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված իրավազորությունները:

6. Սահմանադրական Ղատարանն իրավասու է նաև որպես Ղիմումի ապահովման միջոց արգելանք ընկելու տվյալ կուսակցության գույքի վրա:

7. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարանի որոշումը պետք է ընդունվի Ղիմումի մուտքագրման օրվանից՝ երեք ամսվա ընթացքում:

8. Եթե գործի Ղատարաքննության ժամանակ Ղիմող կողմը հրաժարվում է Ղիմումից, և տվյալ կուսակցությունը եռօրյա ժամկետում չի առարկում Ղրա Ղեմ, ապա գործի վարույթը կարճվում է:

9. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական Ղատարանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) Ղիմումը մերժելու մասին.

2) կուսակցության գործունեությունը որոշակի ժամկետով կասեցնելու մասին, և կարող է այդ ժամկետում կուսակցության վրա Ղնել կասեցման համար հիմք հանդիսացած խախտումները վերացնելու պարտականությունները:

3) կուսակցության գործունեությունն արգելելու մասին:

10. Սույն հոդվածում նշված գործերով որոշում ընդունելիս սահմանադրական Ղատարանն իրավասու է գնահատելու նաև կուսակցությունների մասին օրենքի՝ քննվող գործով կիրառման ենթակա Ղրույթների սահմանադրականությունը, և, հանգելով Ղրանց՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը՝ որոշում է ընդունում Ղիմումը մերժելու մասին:

11. Որոշումն ընդունվում է սահմանադրական Ռատարանի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Գ Լ ՈՒ Խ 11

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հոդված 81.

Դատական ծառայությունը և Ռատարանի ծառայողները

1. Սահմանադրական Ռատարանի աշխատակազմում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, Ռատարանի ծառայությունն է, իսկ աշխատակազմում համապատասխան հաստիքները զբաղեցնող աշխատողները Ռատարանի ծառայողներն են:
2. Սահմանադրական Ռատարանում Ռատարանի ծառայության վրա տարածվում են Ռատարանի ծառայության հարաբերությունները կարգավորող օրենքները այնքանով, որքանով ընդհանրապես հակասում սույն օրենքին:
3. Սահմանադրական Ռատարանում Ռատարանի ծառայության առանձնահատկությունները սահմանվում են սահմանադրական Ռատարանի կանոնակարգով՝ սույն օրենքի և Ռատարանի ծառայության հարաբերությունները կարգավորող այլ օրենքների հիման վրա:

Հոդված 82.

Դատական ծառայության պաշտոնների Ռատարանի կազմակերպումը

1. Դատական ծառայության պաշտոնները սահմանադրական Ռատարանում Ռատարանի կազմակերպում են հետևյալ խմբերի.
 - 1) Ռատարանի ծառայության բարձրագույն պաշտոնները.
 - 2) Ռատարանի ծառայության գլխավոր պաշտոնները.
 - 3) Ռատարանի ծառայության առաջատար պաշտոնները.
 - 4) Ռատարանի ծառայության կրտսեր պաշտոնները:
2. Յուրաքանչյուր խմբի Ռատարանի ծառայության պաշտոնները Ռատարանի կազմակերպում են 1-ին և 2-րդ

ենթախմբերի:

Հոդված 83.

Դատական ծառայողների Ղասալին աստիճանները

1. Սահմանադրական Ղատարանի Ղատական ծառայողներին շնորհվում են հետևյալ Ղասալին աստիճանները.

1) Ղատական ծառայության բարձրագույն պաշտոնները զբաղեցնող Ղատական ծառայողներին՝ արժարանատուության բարձրագույն պետական խորհրդականի, արժարանատուության 1-ին կամ 2-րդ Ղասի պետական խորհրդականի Ղասալին աստիճաններ.

2) Ղատական ծառայության գլխավոր պաշտոնները զբաղեցնող Ղատական ծառայողներին՝ արժարանատուության 1-ին կամ 2-րդ Ղասի խորհրդականի Ղասալին աստիճաններ կամ արժարանատուության 2-րդ Ղասի պետական խորհրդականի Ղասալին աստիճան.

3) Ղատական ծառայության առաջատար պաշտոնները զբաղեցնող Ղատական ծառայողներին՝ Ղատական ծառայության 1-ին կամ 2-րդ Ղասի առաջատար ծառայողի Ղասալին աստիճաններ կամ արժարանատուության 2-րդ Ղասի խորհրդականի Ղասալին աստիճան.

4) Ղատական ծառայության կրտսեր պաշտոնները զբաղեցնող Ղատական ծառայողներին՝ Ղատական ծառայության 1-ին կամ 2-րդ Ղասի ծառայողի Ղասալին աստիճաններ կամ 2-րդ Ղասի առաջատար ծառայողի Ղասալին աստիճան:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված Ղասալին աստիճանները շնորհում է սահմանադրական Ղատարանի նախագահը, իսկ մյուս Ղասալին աստիճանները՝ սահմանադրական Ղատարանի աշխատակազմի ղեկավարը:

3. Դատական ծառայության Ղասալին աստիճանները հավասար են քաղաքացիական ծառայության համար նախատեսված Ղասալին աստիճաններին:

4. Սահմանադրական Ղատարանի աշխատակազմում սույն օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված պաշտոնի նշանակման հետ միաժամանակ Ղատական ծառայողին շնորհվում է Ղատական ծառայության համապատասխան Ղասալին աստիճան, եթե նա չունի Ղատական կամ պետական ծառայության ավելի բարձր Ղասալին աստիճան: Տվյալ Ղեպքում անձը պահպանում է իր ավելի բարձր Ղասալին աստիճանը:

5. Դատական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող Ղասալին աստիճանից ավելի բարձր Ղասալին աստիճան շնորհվում է օրենքով և սահմանադրական Ղատարանի կանոնակարգով սահմանված կարգով նրա գործունեության գնահատման արդյունքում:

6. Դատական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձին Ղատական ծառայության համապատասխան Ղասալին աստիճան շնորհվում է փորձաշրջանի ավարտից հետո:

7. Դատական ծառայողների Ոստային աստիճանները պահպանվում են աշխատանքից ազատվելու, ինչպես նաև պետական ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելու ընթացքում, այլ թվում՝ Ոստային ծառայության համակարգում:

Հոդված 84.

Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:
2. Սահմանադրական Ոստարանի նոր կանոնակարգն ընդունվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:
3. Սահմանադրական Ոստարանի կանոնակարգի՝ «Սահմանադրական Ոստարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հարցերին վերաբերող ընդունվելու ուժի մեջ են մտնում Ոստային ծառայության հարաբերությունները կարգավորող օրենքների ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ:
4. Սահմանադրական Ոստարանի Ոստային ծառայողներին Ոստային աստիճաններ շնորհվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:
5. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած հանաչել «Սահմանադրական Ոստարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (20 նոյեմբերի 1995 թվականի, ՀՕ-19):

Հայաստանի Հանրապետության
Նախագահ
Ռ. Քոչարյան

2006 թ. հունիսի 14
Երևան
ՀՕ-58-Ն